

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

4-րդ դասարան

Մ Ա Յ Ր Ե Ն Ի

ԹԵՍՏ 4

Շրջան, քաղաք _____

Ուսհաստատություն _____

Դասարան _____

Ա. Ա. Հ. _____

Ամսաթիվ _____

Սիրելի՛ աշակերտ

Թեստ-գրքույկն ընդգրկում է 15 առաջադրանք:

1-6-րդ առաջադրանքները կատարել ըստ տրված տեքստի:

1-3-րդ, 5,6-րդ և 15-րդ առաջադրանքներում գրել պատասխանը:

4-րդ և 9-12-րդ առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ: Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը (համարները) վերցնել շրջանակի մեջ: Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, նշված պատասխանի համարի վրա դնում եք X նշանը ~~3~~ և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

7,8-րդ և 14-րդ առաջադրանքները լրացնել:

13-րդ առաջադրանքներում կատարել համապատասխանեցում:

Թեստ գրքույկի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալը՝ 0:

Թեստ գրքույկի առավելագույն միավորը 15:

Աշխատանքի կատարման համար տրվում է 45 րոպե:

Ցանկանում ենք հաջողություն

1-6-րդ առաջադրանքները կատարել ըստ տեքստի

Քաղաքում բնակվող մի մուկ հյուր է գնում մի գյուղաբնակ մկան մոտ: Մուկը ապրում էր դաշտում, սնվում էր հացահատիկով: Նա իր հյուրին հյուրասիրում է ցորեն, գարի, հաճար:

Քաղաքից եկող մուկը ուտում է և ասում.

-Քո ուտելիքը քիչ է, չոր, ոչ համեղ, դրա համար էլ այդպես նիհար ես: Հյուր արի ինձ և կտեսնես՝ մենք ինչպես ենք սնվում:

Գյուղից մուկը հյուր է գնում քաղաք: Նա կուչ է գալիս հատակի տախտակների տակ մինչև կես գիշեր: Մարդիկ խոհանոցում ուտում են, խմում և գնում քնելու: Նրանք դուրս են գալիս իրենց թաքստոցից ու մտնում աղբամանի մեջ: Գյուղից եկած մկան համար ուտելիքի մնացորդները շատ համեղ էին և չգիտեր՝ ինչից սկսեր: Նա ասաց.

-Դու ճիշտ ես, մեր ապրուստը վատ է, ես էլ կտեղափոխվեմ քաղաք:

Բայց նա դեռ խոսքը չէր ավարտել, երբ լույսը վառվեց և տանտերն սկսեց մուկ բռնել: Դաշտային մուկը մի կերպ ազատվեց:

-Դաշտում ես ապրում եմ ազատ, վախ չունեմ, ոչինչ, որ սնվում եմ միայն հացահատիկով,

- ասաց դաշտային մուկը և վերադարձավ:

1-3-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

1. Ի՞նչ է հյուրասիրում գյուղաբնակ մուկը իր հյուրին:

Պատասխան՝ _____:

2. Ինչո՞ւ է հյուր կանչում քաղաքից եկած մուկը դաշտային մկանը:

Պատասխան՝ _____:

3. Ի՞նչ է տեսնում այնտեղ դաշտային մուկը:

Պատասխան՝ _____:

4. **Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:**

Ինչո՞ւ դաշտային մուկը վերադարձավ գյուղ:

- 1) Որովհետև քաղաքում ուտելիք չկար:
- 2) Դաշտում ապրում էր ազատ և ոչնչից վախ չուներ:
- 3) Քաղաքում բնակվող մուկը նրան լավ չհյուրասիրեց:

5,6-րդ առաջադրանքներում գրել պատասխանը

5. Տեքստից դուրս գրել մեկ ածանցավոր բառ և բաժանել բաղադրիչների:

Պատասխան՝ _____:

6. Տեքստից դուրս գրել մեկ նախադասություն և ընդգծել ստորոգյալը:

Պատասխան՝ _____:

7, 8 -րդ առաջադրանքներում լրացնել աղյուսակը

7. Տրված բառերով և ածանցներով կազմել նոր բառեր:

<i>Արմատ</i>	<i>Նախածանց</i>	<i>Նոր բառ</i>
ամոթ	դժ	
գույն	ընդ	
միշտ	ց	
մահ	ան	

8. Խմբավորել հետևյալ բառերը:

հաղթանակ, մեծարժեք, կարգ, գլխավոր, կամազուրկ, հյուր, քաղցրավուն, քաջածանոթ, ծով,

պարզ	բարդ	ածանցավոր

9, 10-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ

9. Նախադասությանը համապատասխանող բառն է՝

Պարանը կապեցին ծառի 1) կատարին, 2) ծայրին :

10. Ո՞ր բառակապակցության մեջ է ածականը գործածված փոխաբերական իմաստով:

- 1) քաղցր հյուր
- 2) պարզ լճակ
- 3) մատղաշ ծառ
- 4) ոսկեզօծ դաշտեր

11, 12-րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ

11. Ո՞ր բառերի ուղղագրությունն է ճիշտ:

- 1) ձվածեղ, 2) պարզևել, 3) վատառողջ, 4) անհանբեր, 5) ութանասուն, 6) չորրորդ, 7) օրրան

12. Ո՞ր բառակապակցություններն են դարձվածքներ:

- 1) գրիչը գցել, 2) քիթը կախել, 3) լույսը վառել, 4) սիրտ տալ, 5) սեղանը հավաքել,
- 6) գլուխը յուղել, 7) ոչինչ չանել

13. Համապատասխանեցնել.

Բառեր

- 1) բարդ
- 2) մեղմ
- 3) ծերունի

Հոմանիշներ

- ա) սաստիկ
- բ) զառամյալ
- գ) խրթին
- դ) երիտասարդ
- ե) հանդարտ
- զ) պարզ

Պատասխան՝ 1-____, 2-____, 3 -____

14. Լրացնել.

քերկրանք բառի բացատրությունն է՝ _____:

15. **Գրել պատասխանը:**

Ո՞ր ստեղծագործությունից է մեջբերումը:

«Մի օր էլ, մի շա՛տ դժբախտ օր, մի ահռելի դրդոց տարածվեց ամբողջ թագավորությունով մեկ. մարդը պայթեցրեց Սևանից դուրս եկող միակ գետի՝ Հրազդանի հունը: Պայթեցրեց, ու ջուրը սկսեց փախչել, թագավորությունն սկսեց ցամաքել: Գիլլի լիճն էլ ցամաքեց»:

Պատասխան՝ _____:

Լրացնում է ստուգողը

Ընդհանուր միավորը	
Գնահատականը 10 բալանոց մոդակով	

Ստուգող՝ _____ Ա.Ա.Հ _____ ստորագրություն